

Հայրապետական օրգանի առաջին համարը ստացվել է արտասահմանում և առաջ է քերել մեծ հետաքրքրություն հայութան մեջ: Իրանում հրապարակվող «Վերածնունդ» թերթը ամբողջությամբ արտատպել է Ամենայն Հայոց Հայրապետության Ազգերնոր Տեղակալ Տ. Գեղորգ Մրբազան Արքեպիսկոպոսի խիստ շահեկան հոդվածը՝ «Հայ եկեղեցու պարտքը իր ժողովրդի համդեպ»:

«Վերածնունդ» թերթը (թիւ 935—93, 1944 թ.) հատուկ հոդված է նվիրել ամսագրին, որի մեջ շեշտում է Հայրապետական օրգանի հրապարակման կարեւորագույն նշանակությունը: Թերթը գրում է.

«Մտայեւ ենք Մայր Աթոռի «Էջմիածին» պաշտոնաթերթի առաջին համարը բաղկացած աւել քան 50 մեծագիր էջերից:

Երեսի թղթէ կազմի վրա ձեր առջև պատկերանում է Մայր Աթոռը, նրա յետեւում կանգնած են մեծ ու փոքր Մասիսները, նկարի վերը գեղեցիկ տառերով գրւած է ամսագրի անունը, այս բոլորը շրջանակւած է գրաւիչ զարդանկարով:

Ամսագրի սկզբում գետեղված է Ամենայն Հայոց Հայրապետութեան Ազգերնոր Տեղակալ Գեղորգ Արքեպիսկոպոսի մեծագիր նկարը:

«Պարունակությունը ճոխ և խիստ շահեկան: Ամենայն Հայոց Հայրապետութեան Տեղակալի «Հայ եկեղեցու պարտքը իր ժողովրդի համդեպ» կուռ յօդւածի մէջ պարտւած է թէ՛ եկեղեցու, թէ՛ պետութեան փոխյարաբերութեան պատկերը և հայրենասիրական կոչ է արւած ամբողջ հայ ժողովրդին կատարելու իր սրբազան պարտականութիւնը և կուի դուքս գալու, ձեռք ձեռքի տւած, բոլոր միջոցներով, ընդդէմ ֆաշիզմի:

«Ջետեղւած են Ազգերնոր Տեղակալի հեռագիրը Մարաշախա Ի. Վ. Ստալինին, նրա պատասխանը, Ամենայն Հայոց Հայրապետութեան Ազգերնոր Տեղակալի յորդոր կոչերը հայ ժողովրդին կենտրոնանալու սովետական հայրենիքի շուրջը, «Մասունցի Դաւիթ» տանկային շարասիւնի առթիւ առաքւած հեռագրերը, բաղմաթիւ նկարները այդ նորակառոյց Քանկային շարասիւնի: Հեռագրական փոխանակութիւններ Ռուսաց Սերգէյ պատրիարքի հետ:

Ճիւղ մի շարք խիստ շահեկան ու կարեւոր յօդւածներ: Ակադեմիկոս Ստ. Մալխասեանի «Ե՞րբ են հայերը ընդունել ջրիստոնէութիւնը» կրօնա-պատմական արժէքաւոր յօդւածը, Ակադեմիկոս Հ. Աճառեանի «Հայ տառերի դիտարկումը թւականը»: Ընդարձակ, դնահատեղի ու խոր ուսումնասիրութիւն է «Ուսչատուր երէց Կաֆայեցու տարեգրութիւնը» պրոֆ. Աշոտ Աբրահամեանի: Մասնաւոր հետաքրքրութիւն է ըստեղծում արեւտի վաստակաւոր գործիչ Գ. Լեոնեանի «Յովհաննէս վարդապետ Մրբուզ» (հոնտոր, աստուածաբան և նկարիչ 17-րդ դարում) յօդւածը, Եղնիկ վարդապետն իր հերթին ուսումնասիրել է «Մ. Էջմիածնի Մ. Տաճարի ձեռագիր աւետարանները»:

«Դժբախտաբար մեր թերթի ծաւալը թոյլ չի տալիս մեզ մի առ մի անդրադառնալ իւրաքանչիւր յօդւածին առանձնապէս, սակայն մեր ընթերցողները յօդւածագրերի պատկառելի անուններից պիտի ըմբռնեն թէ՛ «Էջմիածին» ամսագրին իր այդ աշխատակիցներով և յիշւած յօդւածներով որքան յուրջ, արժէքաւոր և կարեւոր համդէպ է:

«Մենք ջերմագին ողջունում ենք այս դնահատեղի գործը Մայր Աթոռի և մաղթում ենք յարատեւութիւն և ծաւալում»: